ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՅԱՂԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29.07.2015թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77^1-77^6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի N 6-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի և տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Վահան Վանյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Յաղդան համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման և տրանսպորտի ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Յաղդան համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Վահան Վանյան _____

Համայնքի ղեկավար՝
Արամ Ջանջուղազյան _____